Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. հունիսի 28-ի թիվ 6 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«28» 06. 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՌՅԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Կ Ա Ր Գ

(փոփոխություններով)

Ի . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ընդունելությունը կազմակերպվում է ‹‹Գավառի պետական համալսարանում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսուցումը շարունակելու կարգ››-ին համապատասխան, միաժամանակ, հիմք ընդունելով ‹‹Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին›› ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին ՀՀ Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի թիվ 63 և 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 74 որոշումները՝ ընդունելությունն անցկացվում է առցանց:

2. Դիմորդները դիմում-հայտերը և սույն կարգի 3-րդ կետում նախատեսված փաստաթղթերի պատճենները ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով՝ ներբեռնելով Համալսարանի համացանցային /www.gsu.am/ կայքի գլխավոր էջի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների դիմումների առցանց ընդունման հարթակում՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 30-ը:

3. Գավառի պետական համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում կրթությունը շարունակելու նպատակով քոլեջների բարձր առաջադիմությամբ շրջանավարտներից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) էլեկտրոնային դիմում՝ ուղղված Համալսարանի ռեկտորին.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճեն (անձնագիր կամ նույնականացման քարտ).

3) ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի լուսապատճեն.

4) միջին մասնագիտական ուսումնական հաստատության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրության պատճեն.

5) լուսանկարի լուսապատճեն /սկանավորված/ (3x4 չափսի).

6) զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճեն /առկայության դեպքում/

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

II. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԳՊՀ-ՈՒՄ

4. Գավառի պետական համալսարանում ուսուցումը շարունակելու հավակնորդների սահմանվածից ավելի մեծ թվի առկայության դեպքում համալսարանն իրականացնում է հավակնորդների մրցութային ընտրություն մանդատային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) առցանց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

5. Մրցույթն անցկացնելիս՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տրվում է այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

- գերազանցության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ),
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միջուկում առավել բարձր միջին գնահատական,
- ամփոփիչ ավարտական ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ,

- պետական որակավորող հանձնաժողովի կողմից հատուկ երաշխավորություն:

Նշված բոլոր պայմանների հավասարության դեպքում կազմակերպվում է հավակնորդների առցանց հարցազրույց:

6. Մրցույթով անցած անձանց Համալսարանի ռեկտորի հրամանով թույլատրվում է մասնակցել ուսումնական պարապմունքներին:

7. Մրցույթով անցած անձանց՝ որպես ուսանող հրամանագրումը կատարվում է միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների առարկայական տարբերությունների առցանց հանձնումից հետո:

Մրցույթով անցած և պարտադիր զինվորական ծառայության մեկնած անձանց տրվում է ակադեմիական արձակուրդ: Առարկայական տարբերությունների հանձման առավելագույն ժամկետը երեք ամիս է:

8.Ընդունելության արդյունքներն արձանագրվում են, արձանագրությունները ստորագրվում է հանձնաժողովի նախագահի ու առցանց ընդունելությանը մասնակցած անդամների կողմից և կնքվում:

9. Համալսարան ընդունված անձինք սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները /կամ պատճենները՝ լուսապատկերների փոխարեն/ ներկայացնում են Համալսարան՝ անձնական գործում պահելու նպատակով:

10. Համալսարան ընդունված անձը ներկայացվում է հրամանագրման, և Համալսարանի ու նրա միջև կնքվում է պայմանագիր: